ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-20/9 » ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

Ք. Երևան 31.08.2020թ.
ժամը 14:00

Հանձնաժողովի նախագահ՝
Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային
անվտանգության տեսչական
մարմնի ղեկավարի տեղակալ Ա. Պապիկյան

Անդամներ՝
Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային
անվտանգության տեսչական
մարմնի ղեկավարի օգնական Բ. Մուրադյան
Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային
անվտանգության տեսչական
մարմնի ղեկավարի օգնական Թ. Կարապետյան

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային
անվտանգության տեսչական մարմնի համակարգչային
տեխնիկայի սպասարկման մասնագետ Է. Մարգարյան

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային
անվտանգության տեսչական մարմնի բյուջետային
գործընթացի պատասխանատու Ա.Մարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Ն. Մկրտչյան

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկաների **(Լուսանկարչական սարքերի և օժանդակ պարագաների)** նախահաշվային գները՝ մեկ թվով արտահայտված, ըստ չափաբաժինների՝

Չափաբաժին՝ 1: «Եռոտանի (շտատիվ)» - 100 000
(մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:
Չափաբաժին՝ 2: «Եռոտանի (շտատիվ)» - 250 000
(երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
Չափաբաժին՝ 3: «հատուկ լուսանկարչական խցիկներ» - 1 135 000
(մեկ միլիոն հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:
Չափաբաժին՝ 4: « թիկնապայուսակ » - 35 000
(երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:
Չափաբաժին՝ 5: «տեղեկությունների պահպանման կրիչներ» - 250 000
(երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

1.1 «ՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-20/9 » ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2020 թվականի օգոստոսի 26-ին ժամը 11:00-ին էլեկտրոնային եղանակով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.2 Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը /անվանումը և էլեկտրոնային փոստի հասցեն/:

N	Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցե
1	«Վալսա» ՍՊԸ	Valsa2020 @mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և համապատասխանության մասին.

2.1 Մասնակցի՝ «Վալսա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (Հավելված N 1՝ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ գնանշման հարցմանը մասնակցելու, և Հավելված 2՝ Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ) կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, իսկ N 1.1 Հավելվածում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես տեխնիկական բնութագիրը լրացված է թերի (անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքի հստակ նկարագիրը, ճշտգրիտ չափանիշներով):

2.2 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 41-րդ կետը՝ նիստը կասեցվել է և նույն օրը սույն ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակցին է ուղարկվել՝ անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը: Մասնակիցը սահմանված ժամկետում ուղարկել է փաստաթղթի շտկված տարբերակը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

4. Մասնակիցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ

4.1 Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է.

ՀՀդրամ

Հ/Բ	Ապրանքի անվանումը	Մասնակցի անվանումը	Նախահաշվայի ն գին		
				Գումարն առանց ԱԱՀ	Ընդհանուր գին

1	Եռոտանի (շտատիվ)	-	100 000		
2	Եռոտանի (շտատիվ)	-	250 000		
3	հատուկ լուսանկարչական խցիկներ	«Վալսա» ՍՊԸ	1 135 000	1 130 000	1 130 000
4	թիկնապայուսակ	-	35 000		
5	տեղեկությունների պահպանման կրիչներ	-	250 000		

4.2 Մասնակիցների կողմից 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկներ չկան:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

5 «ՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-20/9» ծածկագրով ընթացակարգի բացման նիստի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

5.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ կետի 1-ին ենթակետը՝ կասեցնել նիստը և «Վալսա» ՍՊԸ-ին որպես ընթացակարգի միակ մասնակից՝ հրավիրել բանակցությունների 3-րդ չափաբաժնի մասով՝ որը կարող է հանգեցնել առաջարկված գնի նվազեցմանը և այն տեղի կունենա 31. 08.2020թ., ժամը 14:00-ին, /ՀՀ վարչապետի աշխատակազմ, Կառավարական տուն 1, 130 սենյակում /

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

«ՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-20/9 » ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովի նախագահ հայտարարեց, որ բանակցություններին հրավիրված մասնակիցը չի ներկայացել:

6. «ՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-20/9» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

6.1 Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը և գնային առաջարկները՝ Հաղթող մասնակից ճանաչել «Վալսա» ՍՊԸ-ին՝ 3-րդ չափաբաժնի մասով:

6.2 Հաստատել գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարության տեքստը համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի:

6.3 "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

6.4 Պայմանգիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում

ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Ա. Պապիկյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Բ. Մուրադյան	ԳՊ/ԳԱ	
	Թ. Կարապետյան	ԳՊ/ԳԱ	
	Է. Մարգարյան	ԳՊ/ԲԱ	
	Ա. Մարգարյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Ն. Մկրտչյան	ԳՊ/ՄՀմ	